ԲԱՐԴ ԱՆՑՅԱԼԻ ԴՊՐՈՑ. ՄԻԳՐԱՑԻԱ

20-22 / 09 / 2024



DANSK KULTUR-INSTITUT
DANISH CULTURAL INSTITUTE

NEW DEMOCRACY FUND

WOMEN'S FUND ARMENIA

CULTURAL & SOCIAL NARRATIVES LABORATORY

ԲԱԴի ու ԲԱԴերի մասին

ԲԱՐԴ ԱՆՑՅԱԼԻ ԴՊՐՈՑԸ (ԲԱԴ) ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԱՐԱՏԻՎՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ (CSN LAB) ԱՄԵՆԱՄՅԱ ՆԱԽԱԳԻԾՆ Է: ԲԱԴ 2024 ոչ ֆորմալ կրթական ծրագրի թեմաներն են փախստականությունը և միգրացիան՝ հատկապես բռնի տեղահանությունների, պատերազմների և հակամարտությունների համատեքստում:
Այս այլընտրանքային դպրոցը CSN Lab-ի թիմի կողմից ստեղծված կարևորագույն հարթակներից մեկն է, որն ուղղված է նպաստելու Հայաստանի և տարածաշրջանի բարդ անցյալի շուրջ մտորումներին և երկխոսությանը: Տարիներ շարունակ մենք զբաղվում ենք հիշողության ուսումնասիրություններով՝ փորձելով անդրադառնալ հիշողության և համակեցության համատեքստում ամենից հրատապ թեմաներին՝ հիշողությանը և միգրացիային, հիշողությանը և մշակութային ժառանգությանը, հիշողությանը և քաղաքային միջավայրին, հիշողությանը և բնությանը/շրջակա միջավայրին, հիշողությանը և գենդերային հավասարությանը և այլն: Անցյալի ուսումնասիրությունը մեր պայքարն է հանուն թափանցիկ և ժողովրդավար հիշողության, ինչպես նաև մեր ցանկությունը՝ ապակենտրոնացնելու հիշողության ուսումնասիրությունները և ստեղծելու անցյալի ռեֆլեքսիայի համար առավել ներառական և հորիզոնական միջավայր:

Լինելով կազմակերպություն, որը մշակութային նախաձեռնությունների, հետազոտությունների և ակտիվիզմի միջոցով նպաստում է ժողովրդավարական էկոհամակարգի զարգացմանը, CSN Lab-ը տարիներ շարունակ զբաղվում է մշակութային իրավունքների ջատագովությամբ և վերջիններիս շուրջ դիսկուրսի ձևավորմամբ: Միգրացիան և բռնի տեղահանությունները ԲԱԴ 2024-ի առանցքային թեմաներն են, ինչը պայմանավորված է ինչպես ստեղծված քաղաքական իրավիճակով, մշակութային փոխակերպումներով և հասարակական մարտահրավերներով, այնպես էլ՝ CSN Lab-ի փորձով: Ամեն տարի մենք փոխում ենք դպրոցի թեմատիկ ուղղվածությունը՝ փորձելով մի շարք գիտակարգերի և մեթոդների հսմադրությամբ, տարբեր մասնագետների շրջանում լրացնել գիտելիքների այն բացերը, որոնք հաճախ չեն հասցեագրվում ակադեմիական կրթական համակարգի կողմից:

Ամեն տարի Բարդ անցյալի դպրոցին մասնակցում են բազմաթիվ մշակութային գործիչներ, արվեստագետներ, ակտիվիստներ, մարդու իրավունքների պաշտպաններ, սոցիալական աշխատողներ, հետազոտողներ և քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչներ: Լինելով միջգիտակարգային հարթակ, CSN Lab-ը միշտ բաց է նոր համագործակցությունների և համաստեղծարարությունների համար:

***

2020 ԹՎԱԿԱՆԻՑ Ի ՎԵՐ, ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ, ռազմական գործողությունների և բռնի տեղահանությունների արդյունքում, ավելի քան 100 հազար արցախցի հաստատվել է Հայաստանում: Առկա միգրացիոն հոսքերն ավելի են խտանում՝ պայմանավորված տարածաշրջանի այլ հակամարտություններով ու պատերազմներով:

Բարդ անցյալի դպրոց նախագիծը նպատակ ունի վեր հանել և վերլուծել անցյալի բռնի տեղահանություններն ու արդի միգրացիոն ճգնաժամերը, դրանց փոխկապակցվածությունն ու հետևանքները: Ցավոք, մեր տարածաշրջանում միգրացիան և բռնի տեղահանությունը, գրեթե երբեք չեն դադարում: Հանրությունը, չունենալով բավականաչափ ժամանակ և տարածություն՝ ռեֆլեքսիայի ենթարկելու միգրացիոն փոփոխությունների և/կամ ալիքի մեկ օրինակ, բախվում է մեկ ուրիշին, ինչը շարունակվում է տասնամյակներ ի վեր:

CSN LAB-Ի ՀՐԱՎԵՐՈՎ ԱՅՍ ՏԱՐԻ դպրոցում կբանախոսեն ոլորտի լավագույն հետազոտողներն ու տեսաբանները՝ ներկայացնելով այնպիսի առանցքային թեմաներ, ինչպիսիք են.

→ Փախստականությունը և հիշողության քաղաքականությունը,

→ Բազմաքայլ տեղահանությունները՝ հայ-ադրբեջանական հակամարտության և պատերազմների համատեքստում,

→ Հայկական մշակույթի պահպանումը՝ Օսմանյան կայսրության բռնագաղթերի պայմաններում,

→ Էկոմիգրացիան Խորհրդային Միության բռնատիրական կարգերի շրջանում,

→ Կանանց փորձառությունները հակամարտությունների, պատերազմների և բռնի տեղահանությունների համատեքստում,

→ Միգրացիոն հոսքերի արտացոլանքն ու արտեֆակտերը քաղաքային միջավայրերում,

→ Բանավոր պատմությունների որոշիչ դերը հիշողության ուսումնասիրություններում,

→ Լուսանկարչությունը որպես հայկական համայնքների պահպանման միջոց,

→ Սփյուռքահայ գրականությունը որպես տրավմատիկ շրջադարձերի հետևանք և վկայություն, և այլն:

Այս տարի Բարդ անցյալի դպրոցը առանձնահատուկ է թե՛ թեմաների բազմազանությամբ, թե՛ տարբեր ձևաչափերով միջոցառումներով: Եռօրյա ինտենսիվ ծրագրի շրջանակներում տեղի կունենան.

→ Թեմատիկ դասախոսություններ և քննարկումներ,

→ Աշխատարաններ,

→ Գրքերի և մուլտիմեդիա նախագծերի շնորհանդեսներ,

→ Հիշողության շրջայց Երևանում,

→ Ազատ խոսափող ձևաչափով միջոցառումներ:

ուսուց-չանոց

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐՅԱՆ

Տիգրան Ամիրյանը Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիաի համահիմնադիրն է: Նա արդի համաշխարհային գրականության մասնագետ է, բանասիրական գիտությունների թեկնածու, սեմիոլոգ, համադրող և ժամանակակից արվեստի հետազոտող: Նա հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների, այդ թվում՝ գրականության պոստմոդեռնիստական ժանրերի ուսումնասիրության, գրականության սոցիոլոգիայի, մշակութային և քաղաքային հիշողության թեմաներով: Տիգրան Ամիրյանը համադրում է նաև նախագծեր, որոնք անդրադառնում են մշակութային իրավունքներին և գաղութային անցյալին:

ԼՈՒՍԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ

Լուսինե Խառատյանը մշակութային մարդաբան և արձակագիր է: 2018 թվականից նա ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի գիտաշխատող է, իսկ 2022-ի ապրիլից՝ ԵՊՀ Շարունակական կրթության կենտրոնի տնօրեն: 2023թ. Լուսինե Խառատյանի Սիրիավեպ վեպն առաջադրվել է ԵՄ գրական մրցանակին: Նրա գրական գործերը թարգմանվել են անգլերեն, գերմաներեն, վրացերեն և ռուսերեն լեզուներով:

ՀՈՒՐԻԿ ԱԴԴԱՐԵԱՆ

Հուրիկ Ադդարեանը Կոնկորդիայի համալսարանի Բանավոր պատմության և թվանշային պատմասացության կենտրոնի հիմնական անդամ է, դասավանդում է Հայաստանի ամերիկյան համալսարանում (ՀԱՀ): Նրա հետազոտական և արվեստային աշխատությունների թեմատիկ շրջանակը ներառում է հիշողության ուսումնասիրությունները, ինքնությանն առնչվող հիմնահարցերը, ստեղծագործական գրությունը, վիզուալ արվեստը, բռնության լուսանցքայնացված պատմությունները, գենդերային ու ֆեմինիստական հիմնահարցերը և այլն:

ԳՈՀԱՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Գոհար Ստեփանյանը մշակութային մարդաբան է, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է տոնի և ծեսի մարդաբանությունը, ժողովրդական քրիստոնեությունը, խորհրդային քաղաքական

բռնություններն ու խորհրդային և հետխորհրդային առօրեականությունը, իսկ վերջին տարիներին՝ հատկապես բռնի տեղահանության և փախստականության հետազոտությունները:

ՄԻՍԱԿ ԽՈՍՏԻԿՅԱՆ

Միսակ Խոստիկյանը ճարտարապետ է, տեսաբան, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի դասախոս: Ճարտարապետական նախագծային պրակտիկաներին զուգընթաց, Միսակ Խոստիկյանը հետազոտում է ճարտարապետության փիլիսոփայությունը: Նա հանդես է եկել ճարտարապետության պատմությանն ու փիլիսոփայությանը նվիրված բազմաթիվ բանախոսություններով, հեղինակել է փիլիսոփայական էսսեներ, ինչպես նաև մի շարք պատմվածքներ:

ՍԻՐԱՆՈՒՇ ԴՎՈՅԱՆ

Սիրանուշ Դվոյանը բանասիրական գիտությունների թեկնածու է, դոցենտ: Գիտական հետաքրքրությունները ներառում են հանրային կյանքի և անձնական փորձառության փոխակերպումներում խոսքային պրակտիկաների, հանրության արդիացման պրոցեսների արտիկուլացիաների և սրանց հարող պրակտիկաների ուսումնասիրությունը: Վերջին տարիներին զբաղվում է պետական բռնության, մասնավորապես խորհրդային Գուլագի ու վերջինիս գեղարվեստական վերարտադրության հարցերով:

ԷՎԻՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Էվիյա Հովհաննիսյանը ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ասպիրանտ է: Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի գրասենյակում աշխատում է որպես ծրագրերի համակարգող: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակները ներառում են էթնո-քաղաքական հակամարտությունները, ազգայնականությունը, ինքնությանն առնչվող հիմնահարցերը, միգրացիան և փախստականությունը: Էվիյա Հովհանիսյանը հեղինակել է միգրացիայի շուրջ մի շարք գիտական հոդվածներ և աշխատություններ:

ՎԻԳԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Վիգեն Գալստյանը արվեստի պատմաբան է, անկախ համադրող, Սիդնեյի համալսարանի արվեստաբանական գիտությունների թեկնածու: 2005-ից իրականացնում է հայկական լուսանկարչությանը, կինոյին, դիզայնին և ժամանակակից արվեստին առնչվող հետազոտական տարբեր նախագծեր: 2020–23 թվականներին ղեկավարել է Հայաստանի ազգային կինոկենտրոնի կինոժառանգության բաժինը, իսկ այժմ տնօրինում է ՄանԲան տեսողական մշակույթի արխիվը, ինչպես նաև՝ Ազգային պատկերասրահի լուսանկարչության բաժինը:

ԲԱԴագիր

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՅՑ
ՍԵԲԱՍՏԻԱՅԻՑ ՍԵԲԱՍՏԻԱ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ
ԲԱՆԱԼԻՔ

Բանալիք. հիշողության քննախույզ ուսումնասիրությունների հայկական նախաձեռնությունը Մալաթիա-Սեբաստիա թաղամասում կանցկացնի Սեբաստիայից Սեբաստիա. ցեղասպանության հիշողության հետքերով շրջայցը: Հիշողության շրջայցի կազմակերպիչները կներկայացնեն (հետ)խորհրդային շրջանում ցեղասպանության (ոչ) պաշտոնական ոգեկոչման պրակտիկաները և կկիսվեն, թե ինչպես են բանավոր պատմությունները, հուշարձանները ու տեղացիների կոլեկտիվ հիշողությունը պահպանում ցեղասպանության հետքերը:

ԱՇԽԱՏԱՐԱՆ
ՎԻԶՈՒԱԼ և ՊԱՏՈՒՄԱՅԻՆ ՆԱՐԱՏԻՎՆԵՐ ՓԱԽՍՏԱԿԱՆ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ
ԿԱՆԱՅՔ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՆ ZINEԱԴԱԴԱՐ
ՄԱՐԻԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

CSN Lab-ի թիմի անդամ Մարիամ Եղիազարյանը կպատմի, թե ինչպես կարելի է համադրել բանավոր պատմությունները, ինքնակենսագրությունները, հետազոտական տեքստերը, աուդիովիզուալ արվեստի տարատեսակ ժանրերն ու ստեղծել փախստականության և բռնի տեղահանությունների շուրջ հանրության լայն շրջանակներին հասանելի և հետաքրքրական աշխատություններ:

ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ
ԿԵՉՈՒՏ. ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ՋՐԻ ՀԱՏԱԿԻՆ
ԱՐՍԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ճարտարապետ, ուրբան հետազոտող, CSN Lab-ի թիմի անդամ Արսեն Աբրահամյանը կներկայացնի վերջերս լույս տեսած Կեչուտ. հիշողություն ջրի հատակին գիրքը, որն ամփոփում է բռնի տեղահանությունների, էկոմիգրացիայի և հիշողության հիմնահարցերի շուրջ, CSN Lab-ի տարիների հետազոտական աշխատանքը: Գրքից զատ, նախագծի շրջանակներում ստեղծվել է թեմատիկ մուլտիմեդիա հարթակ, որը հիդրոնարատիվների թվանշայնացման առաջին օրինակն է Հայաստանում:

ԲԱԴ-
ացուցակ

օր առաջին / 20.09.2024

Հասցե՝ Գյոթե կենտրոն, Միեր Մկրտչյան փ. 1

Մոդերատոր՝ Մարիամ Եղիազարյան

11:00–11:15	**Մասնակիցների գրանցում**
11:15–11:30	**Տիգրան Ամիրյան / Ողջույնի խոսք**
11:30–12:30	**Ծանոթություն**
12:30–13:45	**Լուսինե Խառատյան / Հայաստանի բարդ անցյալը պատմական տարբեր քառուղիներում**
13:45–14:30	**Ճաշի ընդմիջում**
14:30–15:45	**Հուրիկ Ադդարեան / Սովորելով լսել. բանավոր պատմությունների մեթոդաբանական և էթիկական առանձնահատկությունները**
15:45–17:00	**Գոհար Ստեփանյան / Փախստական կանանց փորձառությունը հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում**
17:00–17:15	**Սուրճի ընդմիջում**
17:15–18:30	**Վիգեն Գալստյան / Լուսանկարչությունը որպես հաղորդակցության և հավաքական հիշողության կերտման միջոց**
18:30–19:00	**Օրվա ամփոփում**

օր երկրորդ / 21.09.2024

Հասցե՝ Գյոթե կենտրոն, Միեր Մկրտչյան փ. 1

Մոդերատոր՝ Արսեն Աբրահամյան

11:00–11:15	**Մասնակիցների գրանցում**
11:15–12:30	**Սիրանուշ Դվոյան / Զարեհ Որբունի. Սփյուռքահայ գրականությունը ցեղասպանության և գաղթականության համատեքստում**
12:30–13:45	**Լուսինե Խառատյան / Միգրացիոն ճգնաժամերի արտացոլումը հիշողության լանդշաֆտում**
13:45–14:30	**Ճաշի ընդմիջում**
14:30–15:45	**Էվիյա Հովհաննիսյան / Բազմաքայլ միգրացիա՝ ընտրություն, թե՞ պարտադրանք**
15:45–16:15	**Սուրճի ընդմիջում**
16:15–17:30	**Միսակ Խոստիկյան / տարա_գիր**
17:30–18:00	**Օրվա ամփոփում**

օր երրորդ / 22.09.2024

Հասցե՝ CSN Lab-ի գրասենյակ, Մեսրոպ Մաշտոցի պ. 29,
Մոդերատորներ՝ Մարիամ Եղիազարյան և Արսեն Աբրահամյան

10:30–11:00	**Մեկնում դեպի Մալաթիա-Սեբաստիա**
11:00–11:15	**Մասնակիցների գրանցում**
11:15–13:30	**Բանալիք / Սեբաստիայից Սեբաստիա. ցեղասպանության հիշողության հետքերով | Հիշողության շրջայց**
13:30–14:00	**Մեկնում դեպի CSN Lab-ի գրասենյակ**
14:00–14:45	**Ճաշի ընդմիջում**
14:45–15:45	**Մարիամ Եղիազարյան / Կանայք հայտարարում են ZINEադադար | Աշխատարան**
15:45–16:45	**Տիգրան Ամիրյան / Բալաթ. Ինչպես ապրել միասին**
16:45–17:00	**Սուրճի ընդմիջում**
17:00–18:00	**Արսեն Աբրահամյան / Կեչուտ. հիշողություն ջրի հատակին | Գրքի շնորհանդես**
18:00–19:00	**Բաց խոսափող**

ԲԱԴԱԲԵՐ

Բարդ անցյալի դպրոց. միգրացիան տեղի կունենա՝

Սեպտեմբերի 20-ին և 21-ին՝ Գյոթե կենտրոնում, Միեր Մկրտչյան փ. 1: Հանրապետության հրապարակից և մետրոյի Զորավար Անդրանիկ կայարանից ոտքով հնարավոր է հասնել 5-7 րոպեում:

Սեպտեմբերի 22-ին՝ CSN Lab-ի գրասենյակում, Մեսրոպ Մաշտոցի պ. 29, մուտք առաջին (գաղտնաբառը #7788), երրորդ հարկ, բն. 7:

Բարդ անցյալի դպրոց. միգրացիա նախագծի շրջանակներում ցանկացած հարցի և/կամ աջակցության անհրաժեշտության դեպքում, խնդրում ենք կապ հաստատել CSN Lab-ի թիմի անդամներ Մարիամի (095 260371, mariam@csnlab.net) կամ Արսենի (098 424757, arsen@csnlab.net) հետ:

CSN Lab-ի գործունեությունն ուղղված է Հայաստանում մշակութային երկխոսության, ժողովրդավարության և խաղաղության հաստատմանը: Մեզ համար անընդունելի են սեքսիզմը, ռասիզմը, հոմոֆոբիան, ատելությունը և անհանդուրժողականության այլ դրսևորումները:

Բարդ անցյալի դպրոց. միգրացիա ծրագիրն իրականացնում է Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիան (CSN Lab) Դանիական մշակութային ինստիտուտի (DCI) Նոր ժողովրդավարության հիմնադրամ (NDF) նախագծի և Հայաստանում կանանց հիմնադրամի (WFA) աջակցությամբ:

CSN Lab-ի թիմն անչափ շնորհակալ է Բարդ անցյալի դպրոց. միգրացիայի բոլոր մասնակիցներին, բանախոսներին և մենթորներին՝ այս ծրագիրը մեզ հետ միասին իրականություն դարձնելու համար: Առանձնակի շնորհակալություն ենք հայտնում Դանիական մշակութային ինստիտուտ-ի (DCI) (Նոր ժողովրդավարության հիմնադրամ (NDF) ծրագիր) և Հայաստանում կանանց հիմնադրամ-ի (WFA) մեր գործընկերներին, առանց որոնց այս նախագիծը կյանքի չէր կոչվի:

CSN Lab-ի թիմը շատ շնորհակալ է Երևանում Գյոթե ինստիտուտին (Goethe-Zentrum Jerewan) ԲԱԴ 2024-ի իրականացմանը սատարելու համար, ինչպես նաև՝ Հանուն ժողովրդավարության եվրոպական հիմնադրամին (EED) որոնց շարունակական աջակցությունը առանցքային է CSN Lab-ի, Հայաստանում ժողովրդավարությանն ու մշակութային երկխոսությանն ուղղված նախագծերի իրականացման համար: